# «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ

# 2005 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵՐԵՎԱՆ 2006

# ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի 17-րդ կետի՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2005 թվականի ներդրումային գործունեության արդյունքների գնահատման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարի 13.04.2006թ. № 045-ԱՂ հրամանի համաձայն ստեղծված աշխատանքային խմբի կողմից:

Աշխատանքային խմբի կազմում ներգրավվել են՝

**Աշխատանքային խմբի ղեկավար՝**

| | |
|---|---|
| Աբգար Բուդաղյան - | Ներդրումային ծրագրերի բաժնի պետ |

**Աշխատանքային խմբի անդամներ՝**

| | |
|---|---|
| Սերգեյ Աղինյան - | Ներդրումային ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ |
| Աշոտ Մինասյան - | Ներդրումային ծրագրերի բաժնի գլխավոր մասնագետ |
| Տիգրան Ներսիսյան - | Ֆինանսական վերլուծության բաժնի գլխավոր մասնագետ |
| Հրանուշ Սողոյան - | Ներդրումային ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ |
| Մեսրոպ Ղարիբյան - | Ներդրումային ծրագրերի բաժնի առաջատար մասնագետ |
| Լուսինե Խեչումյան - | Ֆինանսական վերլուծության բաժնի առաջատար մասնագետ |

Սույն վերլուծական տեղեկանքում օգտագործվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից փաստացի կատարված ներդրումների և սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված հաշվետվություններում և տեղեկատվություններում արտացոլված տվյալները: Հարկ ենք համարում նշել նաև, որ ընկերության կողմից ինչպես փաստացի կատարված ներդրումների, այնպես էլ սպառողների սպասարկման

որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացվող տեղեկատվությունները և հաշվետվությունները պարունակում են բազմաթիվ սխալներ և լրացվում են թերություններով: Առաջարկում ենք ընկերության ուշադրությունը հրավիրել այս փաստի վրա:

Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր դրամային ծավալները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

## «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ 2005 թվականի ներդրումային ծրագիրը

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2005 թվականի տարեկան ներդրումային ծրագիրը հանդիսանում է ընկերության 2005-2007 թվականների եռամյա ներդրումային ծրագրի բաղկացուցիչ մասը: Ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էր տարբեր միջոցառումներ իրականացնել բաշխիչ ցանցերի վերակառուցման և վերազինման ուղղությամբ՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների, ինչպես նաև հուսալիության և անվտանգության աստիճանի բարձրացման և կորուստների նվազեցման նպատակով: Ներդրումներ էր նախատեսված իրականացնել նաև բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով՝ մեքենաների և մեխանիզմների, համակարգչային տեխնիկայի և տնտեսական գույքի ու գործիքների ձեռքբերման ուղղությամբ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2005-2007 թվականների ներդրումային ծրագրին համաձայնություն էր տվել իր 2005 թվականի փետրվարի 9-ի № 13Ա որոշմամբ: Ներդրումային ծրագրով նախատեսված էր 2005-2007 թվականների ընթացքում իրականացնել 19 066,8 մլն դրամի ներդրումներ, որից 7 825,1 մլն դրամի ներդրումները՝ 2005 թվականի ընթացքում:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է ընկերության 2005 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև՝ ըստ դրանց նպատակային առանձնահատկությունների:

2005 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում բաշխիչ ցանցի լարման տարբեր մակարդակներում նախատեսված էր կառուցել կամ վերակառուցել 800 կմ-ից ավելի մալուխային և օդային գծեր, 750-ից ավելի ենթակայաններ, փոխարինել ծառայության ժամկետը սպառած տարբեր էլեկտրակայանքներ:

**ԳՐԱՖԻԿ 1**




Այդ փարում ներդրումների հիմնական մասը՝ ծրագրային ընդհանուր դրամային ծավալի շուրջ 77,5%-ը, նախապեսված էր իրականացնել 0,4 կՎ և 6(10) կՎ բաշխիչ ցանցերում, քանի որ դրանք առավել մաշված են 35 կՎ և 110 կՎ լարման ցանցերի համեմատությամբ և հաճախակի պատճառ են հանդիսանում սպառողների անտեղի հոսանքազրկումների:

Ինչպես տեսնում ենք գրաֆիկական պատկերից, ներդրումային հիմնական գերակայությունը սպասարկման որակի բարելավումն է. այն կազմում է 2005 թվականին նախապեսված ներդրումների ծավալի 73,5%-ը: Հաշվառման համակարգի բարելավման ուղղությունն իր տեսակարար կշռով երկրորդն է ներդրումների ծավալում: Այս ուղղությամբ նախապեսված ներդրումների ծավալի շրջանակներում պետք է փոխարինվեին կամ տեղակայվեին նոր հաշվիչներ և հաշվիչների արկղեր՝ էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով, դրանց ներկայացվող պահանջների ապահովման նպատակով:

Մեքենաների և մեխանիզմների ձեռքբերումը նպատակ էր հետապնդում բարձրացնել ընթացիկ շահագործման և վթարավերականգնողական աշխատանքների որակը և կրճատել դրանց իրականացման ժամանակահատվածը. այս ուղղությամբ իրականացվող ներդրումները ևս պետք է դրական ազդեցություն ունենային սպառողների սպա-

սարկման որակի ցուցանիշների վրա՝ հոսանքազրկումների փնռողության կրճատման մասով:

Ներդրումային ծրագրի մյուս ուղղություններով նախատեսված ներդրումները, որոնք կազմում են ընդհանուրի 3,2%-ը, անհրաժեշտ էին ընկերության գործունեությունը պատշաճ մակարդակով իրականացնելու համար:

## «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ 2005 թվականի ներդրումային գործունեության արդյունքները

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2005 թվականի ներդրումային գործունեության արդյունքները համակողմանի և համապարփակ գնահատելու նպատակով սույն վերլուծական տեղեկանքում դիտարկված է սպառողների սպասարկման որակի ցուցանիշների փաստացի վիճակը այդ ժամանակահատվածի համար և դրանց բարելավման ուղղությամբ ընկերության 2005 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում կատարված ներդրումների փաստացի ծավալները: Հարկ ենք համարում նշել, որ ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները գնահատելիս ընկերության կողմից իրականացված ներդրումներ են համարվել 2005 թվականի ընթացքում լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված օգտակար և օգտագործվող նոր ակտիվների արժեքները: Պետք է նկատի ունենալ, որ այդ ակտիվների ստեղծման ծախսերը կարող են ամբողջությամբ իրականացված լինել ինչպես հաշվետու տարվա ընթացքում, այնպես էլ մասնակիորեն դրան նախորդող ժամանակահատվածի ընթացքում և շահագործման հանձնված լինել հաշվետու տարում: Ուստի, այդ ատկիվների արժեքը չի բնորոշում ընկերության կողմից տվյալ տարվա ընթացքում ներդրումների իրականացման նպատակով ներգրավված ֆինանսական միջոցների չափը: Միևնույն ժամանակ, իրականացված ներդրումների ծավալում չի ներառվել անավարտ աշխատանքների կամ շահագործման չհանձնված ակտիվների արժեքը, քանի որ դրանք դեռևս չեն մասնակցում լիցենզավորված գործունեության իրականացմանը և ազդեցություն չեն կարող ունենալ ընկերության գործունեության ցուցանիշների վրա: Բացի նշվածը, սույն վերլուծական տեղեկանքում չեն դիտարկվել 2005 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներից դուրս իրականացված ներդրումները, քանի որ դրանք գնահատման առարկա չեն կարող հանդիսանալ ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները դիտարկելիս: Այդ ներդրումների կառուցվածքում առկա են եղել երկու բաղադրիչներ՝ 2004 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում

սկսված, սակայն անավարտ աշխատանքներ և ներդրումներ, որոնք ներառված չեն եղել ընկերության 2004 կամ 2005 թվականների ներդրումային ծրագրերում:

## Սպառողների սպասարկման որակի ցուցանիշները և դրանց բարելավման ուղղությամբ փաստացի կատարված ներդրումները

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2005 թվականի ներդրումային ծրագրի այս ուղղության շրջանակներում նախատեսվում էր իրականացնել 5 748,0 մլն դրամի ներդրումներ՝ բաշխիչ ցանցերի լարման տարբեր մակարդակներում օդային և մալուխային գծերի, ենթակայանների մաշված սարքավորումների և այլ էլեկտրակայանքների փոխարինման կամ նորերի կառուցման նպատակով: Այդ ներդրումները պիտի նպաստեին սպառողների հոսանքազրկումների և թույլատրելի սահմաններից էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակի և տևողության կրճատմանը:

Ընկերության կողմից սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ հանձնաժողով ներկայացված տեղեկատվության համաձայն, 2005 թվականի ընթացքում բաշխիչ ցանցերի լարման տարբեր մակարդակներում նորոգումների, սարքավորումների հրաժարման և այլ ընկերությունների (օրինակ՝ հաղորդման ցանցում տեղի ունեցած անջատումների) պատճառով գրանցվել է 7 925 անջատման դեպք՝ 27 953 ժամ ընդհանուր տևողությամբ: Նշված անջատումների արդյունքում հոսանքազրկված սպառողների թվաքանական գումարը կազմել է 5 067 836, այսինքն սպասարկված 958 702 սպառողներից յուրաքանչյուրին բաժին է ընկել առնվազն 5 անջատում: Հոսանքազրկումների հիմնական պատճառ է հանդիսացել սարքավորումների հրաժարումը, որը բնութագրում է բաշխիչ ցանցերի ներկայիս ոչ բարվոք վիճակը և խոսում ներդրումների իրականացման անհետաձգելիության մասին: 2005 թվականին սարքավորումների հրաժարման պատճառով գրանցվել է 5 519 անջատման դեպք՝ 20 639 ժամ ընդհանուր տևողությամբ: Սարքավորումների հրաժարման պատճառով տեղի ունեցած անջատումների արդյունքում հոսանքազրկված սպառողների թվաքանական գումարը կազմել է 4 097 869, կամ որ նույնն է՝ սարքավորումների հրաժարման պատճառով սպասարկված յուրաքանչյուր սպառողին բաժին է ընկել առնվազն 4 անջատում:

Գրաֆիկ 2-ում ներկայացված են սարքավորումների հրաժարման 2005 թվականի քանակական ցուցանիշները՝ ըստ ամիսների:

Error! Not a valid link.

**ԳՐԱՖԻԿ 2**

| | |
|---|---|
| Հունվար | 275 |
| Փետրվար | 351 |
| Մարտ | 836 |
| Ապրիլ | 659 |
| Մայիս | 646 |
| Հունիս | 566 |
| Հուլիս | 442 |
| Օգոստոս | 437 |
| Սեպտեմբեր | 336 |
| Հոկտեմբեր | 377 |
| Նոյեմբեր | 279 |
| Դեկտեմբեր | 315 |

Գրաֆիկական պատկերում բազիսային են դիտարկվել հունվար ամսվա ցուցանիշները՝ տարվա հաջորդ ամիսների ընթացքում սարքավորումների հրաժարումների պատճառով հոսանքազրկումների դինամիկան ներկայացնելու նպատակով: Ինչպես տեսնում ենք գրաֆիկական պատկերը ինքնին բնութագրում է բաշխիչ ցանցերի վատթարացող վիճակը. հունվար ամսին, որը ամենազերբեռնվածն է տարվա ամիսներից, հոսանքազրկումները ամենաքիչն են եղել: Գարնանային անձրևները և քամիները պատճառ են դարձել զանգվածային հոսանքազրկումների: Նույնիսկ ամռանը, երբ բեռը ամենափոքրն է, հոսանքազրկումների քանակը կրկնակի անգամ գերազանցել է հունվար ամսվա ցուցանիշը: Գրաֆիկական պատկերը թույլ է տալիս եզրակացնել, որ տարեվերջին բաշխիչ ցանցերում վիճակը բարելավվելու փոխարեն վատթարացել է տարեսկզբի համեմատությամբ:

Ստորև ներկայացված է ևս մեկ գրաֆիկական պատկեր՝ հոսանքազրկված սպառողների թվաբանական գումարի վերաբերյալ՝ ըստ տարվա ամիսների: Այս գրաֆիկական պատկերում հունվար ամսվա ցուցանիշները ևս դիտարկվել են որպես բազիսային ցուցանիշներ: Ինչպես տեսնում ենք տարվա ընթացքում դիտարկելի է հոսանքազրկված սպառողների թվաբանական գումարի շոշափելի աճ, որի պարագայում միակ եզրակացությունը, որ կարելի է ավելացնել արդեն արվածին այն է, որ տարվա ընթացքում տեղի է ունեցել սպասարկման որակի այս ցուցանիշի անկում:

## ԳՐԱՖԻԿ 3

**Error! Not a valid link.**

$$\frac{\text{Մայիս}}{\text{Հունվար}} = 3{,}25 \qquad \frac{\text{Դեկտեմբեր}}{\text{Հունվար}} = 1{,}84$$

| | |
|---|---|
| Հունվար | 150 277 |
| Փետրվար | 311 880 |
| Մարտ | 464 959 |
| Ապրիլ | 455 621 |
| Մայիս | 488 603 |
| Հունիս | 365 579 |
| Հուլիս | 393 162 |
| Օգոստոս | 361 112 |
| Սեպտեմբեր | 256 555 |
| Հոկտեմբեր | 318 642 |
| Նոյեմբեր | 254 367 |
| Դեկտեմբեր | 277 112 |

Սպասարկման որակի հաջորդ ցուցանիշը, որ դիտարկվել է սույն վերլուծական տեղեկանքում՝ թույլատրելի նորմալ սահմաններից (± 5% 220 Վոլտ, ԳՈՍՏ 13109-97) էլեկտրական էներգիայի լարման շեղման դեպքերի քանակը և տևողությունն է: Այս առնչությամբ 220 Վոլտ լարման սպառողների մոտ դիտարկված առավել ուշագրավ տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Ուսումնասիրելով ընկերության կողմից 2005 թվականի համար ներկայացված տեղեկատվությունը պարզ է դառնում, որ 220 Վոլտ լարման թվով 955 928 սպառողների մոտ 67%-ը ողջ տարվա ընթացքում մատակարարվել է նորմալից (± 5% 220 Վոլտ) բարձր կամ ցածր լարման էլեկտրական էներգիայով: Բայց այս ցուցանիշը դեռևս ամբողջակա-

նորեն չի նկարագրում փարվա ընթացքում գրանցված լարման շեղումների դեպքերի և փնողության ամբողջական պատկերը: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ից, սպառողների որոշ մասի մոտ լարումը ցածր է եղել նույնիսկ 154 Վոլտից, կամ գերազանցել է 242 Վոլտը:

**ԱՂՅՈՒՍԱԿ 1**

**Error! Not a valid link.**

Սույն վերլուծական տեղեկանքում դիտարկվել է նաև 2005 թվականի ընթացքում սպառողների դիմում-բողոքների և հարցադրումների քանակը՝ ըստ դրանք հարուցող պատճառների: Հաշվի առնելով, որ տեղեկատվության ձևը սահմանվել է 2005 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում, տվյալները ներկայացված են դրան հաջորդող ժամանակահատվածի համար: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ում ներկայացված տվյալներից, դիմում-բողոքների և հարցադրումների քանակն ունեցել է աճի տենդենց. 2005 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում 2-րդի նկատմամբ դրանց թիվն աճել է մոտ 20%-ով, իսկ 4-րդը 3-րդի նկատմամբ՝ մոտ 26%-ով: Գրեթե բոլոր դիմում-բողոքները և հարցադրումները՝ միջին հաշվով ընդհանուրի 95%-ը, ներկայացվել են բնակչության կողմից: Սակայն, պետք է նշենք, որ 4-րդ եռամսյակի ընթացքում 2-րդ եռամսյակի նկատմամբ կտրուկ՝ 10 անգամից ավելի, նվազել է էլեկտրամատակարարման ընդհատումների մասին դիմում-բողոքների և հարցադրումների քանակը, այն դեպքում, երբ միևնույն ժամանակահատվածում հոսանքազրկված սպառողների քանակը նվազել է ընդամենը 0,65 անգամ: Միևնույն ժամանակ, կտրուկ աճել է այլ բնույթի դիմում-բողոքների և հարցադրումների տեսակարար կշիռը ընդհանուրի կազմում: Եթե 2-րդ եռամսյակում դրանք եղել են ընդհանուրի 14,1%-ը, ապա 4-րդ եռամսյակի ընթացքում դրանք կազմել են ընդհանուրի մոտ 50%-ը: Մեր կարծիքով տեղեկատվության ձևում դասակարգված են հիմնական բնութագրիչ դիմում-բողոքների և հարցադրումների խմբերը և առկա պատկերը կարող է միայն արդյունք լինել ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված տվյալների թերի կամ ոչ հավաստի լինելու:

Ամփոփելով կատարված դիտարկումների արդյունքները, պետք է փաստենք, որ 2005 թվականի ընթացքում սպառողների սպասարկման որակի ցուցանիշները հոսանքազրկումների մասով փարեսկզբի համեմատությամբ բարելավվելու փոխարեն ըստ էության վատթարացել են, իսկ նորմալից բարձր կամ ցածր լարմամբ էլեկտրաէներգիա ստացած սպառողների քանակը՝ ընդհանուրի 67%-ը, խոսում է որակի այս ցուցանիշի խիստ ցածր մակարդակի մասին: Միևնույն ժամանակ փաստենք, որ ընկերության կողմից 2005 թվականին իրականացման ենթակա ներդրումների 73%-ը պետք է նպաստեր այս ցուցանիշների բարելավմանը:

Ուսումնասիրելով փաստացի կատարված ներդրումների վերաբերյալ ընկերության կողմից հանձնաժողով ներկայացված հաշվետվությունները պարզ դարձավ, որ ներդրումային ծրագրի այս հիմնական ուղղությամբ նախատեսված 5 748 մլն դրամի ներդրումների փոխարեն ընկերությունն իրականացրել է մոտ 380 մլն դրամի ներդրումներ կամ նախատեսվածի ընդամենը 6,6%-ը: Ուստի և, սպասարկման որակի ցուցանիշների ան-

կումը փրամաբանական է և պայմանավորված է ներդրումային ծրագրի այս ուղղությամբ նախապեսված ներդրումների կատարման նման ցուցանիշով:

**ԱՂՅՈՒՍԱԿ 2**

| N | Սպառողի դիմում-բողոքի կամ հարցադրման բնույթը | II եռամսյակ | | III եռամսյակ | | IV եռամսյակ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | հատ | % | հատ | % | հատ | % |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1 | Էլեկտրամատակարարման ընդհատումների մասին | 145 | 15,7 | 127 | 10,1 | 13 | 1,1 |
| *1.1* | *այդ թվում բնակչությունից* | ***123*** | ***13,3*** | ***121*** | ***9,7*** | ***11*** | ***1,0*** |
| 2 | Թույլատրելի սահմաններից լարման շեղումների մասին | 57 | 6,2 | 55 | 4,4 | 65 | 5,7 |
| *2.1* | *այդ թվում բնակչությունից* | ***51*** | ***5,5*** | ***49*** | ***3,9*** | ***64*** | ***5,6*** |
| 3 | Թույլատրելի սահմաններից հաճախության շեղումների մասին | 5 | 0,5 | 0 | 0,0 | 0 | 0,0 |
| *3.1* | *այդ թվում բնակչությունից* | ***5*** | ***0,5*** | ***0*** | ***0,0*** | ***0*** | ***0,0*** |
| 4 | Առևտրային հաշվառքի սարքերի սխալ աշխատանքի մասին | 481 | 51,9 | 439 | 35,0 | 381 | 33,2 |
| *4.1* | *այդ թվում բնակչությունից* | ***463*** | ***50,0*** | ***407*** | ***32,5*** | ***367*** | ***32,0*** |
| 5 | Մատակարարի ցանցերի վիճակի մասին | 51 | 5,5 | 64 | 5,1 | 57 | 5,0 |
| *5.1* | *այդ թվում բնակչությունից* | ***49*** | ***5,3*** | ***62*** | ***4,9*** | ***49*** | ***4,3*** |
| 6 | Մատակարարի աշխատանքի (աշխատակիցների) վերաբերյալ | 56 | 6,0 | 91 | 7,3 | 63 | 5,5 |
| *6.1* | *այդ թվում բնակչությունից* | ***52*** | ***5,6*** | ***87*** | ***6,9*** | ***62*** | ***5,4*** |
| 7 | Այլ բնույթի բողոքներ | 131 | 14,1 | 477 | 38,1 | 568 | 49,5 |
| *7.1* | *այդ թվում բնակչությունից* | ***129*** | ***13,9*** | ***461*** | ***36,8*** | ***544*** | ***47,4*** |
| 8 | ԸՆԴԱՄԵՆԸ | 926 | 100,0 | 1 253 | 100,0 | 1 147 | 100,0 |
| *8.1* | *այդ թվում բնակչությունից* | ***872*** | ***94,1*** | ***1 187*** | ***94,7*** | ***1 097*** | ***95,6*** |

**Հաշվառման համակարգի վերազինման ուղղությամբ փաստացի կատարված ներդրումները**

Ներդրումային ծրագրի հաջորդ՝ հաշվառման համակարգի վերազինման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 966 մլն դրամի ներդրումներ: Այդ նպատակով պետք է փոխարինվեին հետագա շահագործման համար անպիտան հաշվիչները, կատարելագործվեր առևտրային հաշվառման համակարգը, տեղադրվեին չափիչ-ստուգիչ սարքավորումներ և տեղակայվեին հաշվիչների նոր արկղեր՝ հաշվառման սարքերի մեխանիկական վնասվածքները և կողմնակի անձանց միջամտությունը դրանց միացման սխեմային կամ աշխատանքին բացառելու, ինչպես նաև սպառողների և ընկերության ներկայացուցիչների համար հաշվիչի ցուցմունքի տեսանելիությունը, դրանց շահագործման և պահպանման անվտանգությունը ապահովելու նպատակով: Նախատեսված ներդրումները կազմում էին ծրագրի ընդհանուր դրամային ծավալի 12%-ը: Համաձայն ներկայացված հաշվետվությունների, ներդրումային ծրագրի այս ուղղությամբ նախատեսված ներդրումներն իրականացվել են 105,8%-ով:

**Մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման ուղղությամբ փաստացի կատարված ներդրումները**

Այս ուղղությամբ ընկերությունը նախատեսում էր իրականացնել 862,7 մլն դրամի ներդրումներ՝ 117 միավոր մեքենաների և մեխանիզմների ձեռքբերման նպատակով: Այն կազմում էր ծրագրի ընդհանուր դրամային ծավալի 11%-ը: Նախատեսված ներդրումները ընթացիկ շահագործման և վթարավերականգնողական աշխատանքների որակը բարձրացնելու, դրանց իրականացման ժամանակահատվածը կրճատելու նպատակով պետք է նպատակաուղղվեին բեռնատար, հատուկ, վթարավերականգնողական մեքենաների և մեխանիզմների ձեռքբերմանը:

2005 թվականի ընթացքում ընկերությունը ձեռք է բերել 70,2 մլն դրամի 24 միավոր մեքենաներ, որոնցից 18 միավորը՝ մարդատար: Ծրագրի այս ուղղությունը, որը ևս պիտի նպաստեր սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, ընկերությունը կատարել է ընդամենը 8,1%-ով:

Ներդրումային ծրագրի մնացած ուղղություններով նախապեսվում էր հաշվապահական հաշվառման նոր ծրագրային փաթեթի, համակարգչային պեխնիկայի, վարչական շենքերի վերակառուցման և գրասենյակային կահույքի ձեռքբերման նպապակով իրականացնել մոփ 248 մլն դրամի ներդրումներ՝ ծրագրային ծավալի 3%-ի չափով, որից 124 մլն դրամը՝ հաշվապահական հաշվառման ծրագրային փաթեթի ձեռքբերման նպապակով:

Փասպացի կապարված ներդրումների վերաբերյալ փվյալների ուսումնասիրությունը ցույց փվեց, որ ընկերությունը ձեռք չի բերել նախապեսված հաշավապահական հաշվառման նոր ծրագիրը, սակայն համակարգչային պեխնիկայի, գրասենյակային կահույքի ձեռքբերման և վարչական շենքերի վերակառուցման ուղղությամբ նախապեսված ներդրումները համապափասխանաբար իրականացրել է 195,1 %-ով, 394,8 %-ով և 152,1 %-ով: Սրանք ներդրումային ծրագրի միակ ուղղություններն են, որ ոչ թե լիարժեք կապարված են, այլ գերակապարված:

Ստորև՝ աղյուսակ 3-ում, ներկայացված է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2005 թվականի ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշների ամփոփ գնահատականը (աղյուսակ 3, 7-րդ սյուն)՝ ըստ նպատակային ուղղությունների, ինչպես նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի կատարված ներդրումների տեսակարար կշիռը՝ ծրագրային և փաստացի կատարված ներդրումների ընդհանուր ծավալի նկատմամբ (աղյուսակ 3, 4-րդ և 6-րդ սյուներ):

**ԱՂՅՈՒՍԱԿ 3**

| N | Ներդրումային ծրագրի ուղղությունը, ենթաուղղությունը | Հանձնաժողովի հետ համաձայնեցված 2005 թվականի ներդրումների կանխատեսվող ծավալը | | 2005 թվականի ընթացքում փաստացի կատարված ներդրումների ծավալը | | Ներդրումային ծրագրի կատարման տոկոսը |
|---|---|---|---|---|---|---|
| | | մլն դրամ | % | մլն դրամ | % | % |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Սպասարկման որակի բարելավում | 5 747,97 | 73,5 | 379,06 | 21,6 | 6,6% |
| 2 | Հաշվառման համակարգի վերազինում | 966,11 | 12,3 | 1 022,06 | 58,1 | 105,8% |
| 3 | Մեքենաների, մեխանիզմների ձեռքբերում | 862,70 | 11,0 | 70,19 | 4,0 | 8,1% |
| 4 | Հաշվապահական հաշվառման ծրագրի ձեռքբերում | 123,90 | 1,6 | 8,07 | 0,5 | 6,5% |
| 5 | Գրասենյակային կահույքի ձեռքբերում | 20,81 | 0,3 | 40,61 | 2,3 | 195,1% |
| 6 | Համակարգչային տեխնիկայի ձեռքբերում | 33,57 | 0,4 | 132,55 | 7,5 | 394,8% |
| 7 | Վարչական շենքերի վերակառուցում | 70,00 | 0,9 | 106,44 | 6,1 | 152,1% |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 7 825,06 | 100 | 1 758,97 | 100,0 | 22,5% |

## «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ 2005 թվականի ներդրումային գործունեության համապարփակ գնահատականը

Այսպիսով, ամփոփելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2005 թվականի ներդրումային գործունեության արդյունքները պետք է փաստել՝

1. 2005 թվականի պարեվերջին հոսանքազրկումների քանակը աճել է պարեսկզբի համեմատությամբ, իսկ տարվա ընթացքում դիտարկվել է հոսանքազրկումների քանակի կտրուկ աճ,
2. հոսանքազրկումների հիմնական պատճառ է հանդիսացել սարքավորումների հրաժարումը, մեկ սպառողին բաժին է ընկել 5 անջատում, որից 4-ը սարքավորումների հրաժարման պատճառով,
3. բազմաթիվ են թույլատրելի սահմաններից լարման շեղման դեպքերը. սպառողների մոտ 67%-ը ողջ տարվա ընթացքում մատակարարվել է նորմալից (± 5% 220 Վոլտ) բարձր կամ ցածր լարման էլեկտրական էներգիայով: Միևնույն ժամանակ, միջին տարեկան հաշվով 35 000-ից ավելի սպառողների մոտ լարումն անընդհատ գերազանցել է 242 Վոլտը: Եղել են նաև դեպքեր, երբ լարումը մոտ 14 000 սպառողների մոտ մեկ ամսից ավելի ցածր է եղել նույնիսկ 154 Վոլտից,
4. այս պայմաններում ընկերության 2005 թվականի ներդրումային ծրագիրը կատարվել է 22,5%-ով, ընդ որում ներդրումային ծրագրի գերակա ուղղությունը՝ սպառողների սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումները, կատարվել է 6,6%-ով:

**Հաշվի առնելով վերը նշվածը, պետք է եզրակացնել, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2005 թվականին իրականացված փոքրածավալ ներդրումները չեն նպաստել սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը: Փոխարենը 2005 թվականի ընթացքում սպառողների սպասարկման որակի ցուցանիշները հոսանքազրկումների մասով պարեսկզբի համեմատությամբ ըստ էության վատթարացել են, իսկ նորմալից բարձր կամ ցածր լարմամբ էլեկտրաէներգիա ստացած սպառողների քանակը, խոսում է որակի այս ցուցանիշի խիստ ցածր մակարդակի մասին:**

............................................................................................................................................

**ԱՎԱՐՏ**